

51. ԿԸՐԸՐԱ ԱՂՋԻԿ

Կէլնի մեյ խեղճ մարթըմ, կէրթա կուրբաթութեն:

Մարթմ' իրե ասաց. - Ընչի՞ ըտըսնա ծեռքեր տրեր ես ծոցտ:

Ասաց. - Ի՞նչ անեմ չըտնեմ ծոցս, ես իկեր եմ կուրբաթութեն, անութի ծարավ, թափառական կան կուգյամ, գի գյործ չկա:

Էտա մարթ տարավ էտա կուրբաթին տու միտուր, նըստըցուց ինե, թոռմ' իտոր ծեռ, ասաց. - Կընա քյե խամար ծյուկ պոնի, տար քյո իտարեն արա՛, մի մնա անոթի:

Մարթն տարավ թոռն, իթալ մեչ ծովուն, օր քյառսուն փարի ծյուկ պոնեց, ծախեց, ուր ապրուստն արաց:

Օրմ էլ քյանի մը դիր թոռ իթալ, ծյուկ չէրնաց, կըրըրա էրնաց: Պոնեց կըրըրեն, էօլեոխնեց մեչ ճրին:

Ճար կտրավ, կրերե մը պոնեց իպե իտիր տուն: Էն մեկել օր կէրթա էլըմ ծյուկ պոնել: Իրիկուն կուգյա կտիսնա ուր տուն խորտուկ, ավիլուկ: Կասի. «Տե՛ր աստված, էսա իմ տուն ո՞վ ի մտե, գայիր տան տեր տուն տըվե ուրիշին. կայնի մեյ խատ էրթամ իրիշկամ գյամ»:

Կընայ տան տիրոչ մոտ, ասաց. - Աղա՛, տյու քյո տուն չէլնի՞ ուրիշիմ' էլ ես տվե:

Տան տեր ինոր սախար տարավ, ասաց. - Ախպե՛ր, տյու ծռա՞ր, ի՞նչ կասիս, ես տուն ուրիշին չեմ տվե:

Շատ չէրկընցուցեմ, մեկ օր, էրկու օր կուգյա տուն՝ կտիսնա որ տուն ավիլուկ, սերսըփուկ: Իրեքյ ավուր վերեն կէլնի կտիաթյութվի խսիր, կաչկի:

Կտիսնա կըրըրեն կպայվի, կէլնի խուռնի-խրեղեն աղչիկըմ, ավել կպոնի ծեռ, ավել պիտի անի: Էտա մսրթ խասավ էտա աղչըկան պոնեց, ասաց. - Ասպած քյե իտու գիկ:

Առրա կընայ աղչըկան կոտ վառեց:

Աղչիյն ասաց. - Վա՜յ, ընչի՞ վանիցիր իմ կոտ, թակավոր կուգյա գի կտանի, տյու կմնաս խեղճ:

Էլմ էտա մարթ կընաց թեխ ուր ծյուկ ծախել, իրիկուն իբի տուն:

Աղչիյն իրկան ասաց. - Ծյուկ ծախելով մեր ապրուստ չէլնի: Կընա՛ էն տեղ, ի՛նչ կընդար, բոռա. «Ջադի՜ մամա, քյո աղչիկ մեյ տոպրակ ոսկի կուզի»:

Մարթ կընաց ծովու պերան, բոռաց. - Ջադի՜ մամա, քյո աղչիկ մեյ տոպրակ ոսկի կուզի:

Ոսկին տըվին, առեց էկավ: Մարթ էտա ոսկով շատ պանցը խորոտ տու մը շինեց:

Ավուր մեյ թակավոր էլավ ֆըռալու, աղչիկ մեչ էտա քեռշկ սարի փենջարին տեսավ: Էկավ տուն, մարթ ճամխեց, էն քեռշկի տեր իպե ուր մոտ:

Ասաց. - Քեզնիյ կուզեմ ճութըմ խավող, որ իմ ասքըրներ ուտեն, տել ավըլնա:

Կուզեր մարթ կուրիսել, որ ինոր կնիկն առնի:

Մարթն իրե դարդըվորվավ նստավ:

Կնիկ կասի. - Ի՞նչ իլե, ըտըսկնա դարդըվորվեր, նստեր ես:

Կասի. - Թակավոր զի տարե, մեյ ճութ խավող կուզի, որ ուր ասքըրներ ուտեն՝ չխլսնի:

Կնիյ կասի. - Էլի կընա մո իմ Ջադի մամեն, ինոր ասա՛. «Քյո աղչիկ խիվանդ ի, մեյ ճութ խավող կուզի»:

Էլավ մարթ կընաց ծովափ, ջադի մամուն բոռաց, ասաց. - Ջադի մամա, քյո աղչիկ խիվանդ ի, ճութըմ խավող կուզի»:

Ջադի մամեն էլավ չափյուկըմ խավող իտուր, մարթն առեց էկավ, տարավ իտուր թակավրուն:

Թակավրու ի՛ղմեն ասքըրներ կերան, տել ավըլյավ:

Թակավորն ասաց. «Էսա չէլավ, ինչը՞ն անեմ, որ էսա մարթ կուրիսցուցեմ»:

Էլավ ասաց. - Պիտի էրթաս զի խամար իշու խավի ծյու պիրես:

Մարթն էկավ էլըմ ինգյավ մտածմունքի մեչ:

Կնիկ կասի. - Ընչի՞ կմտածես:

- Ապա չմտածե՞մ, ըսկու մը պան կուզի, որ մեչ աշխըրին չկընդրվե:

- Էն ի՞նչ կուզի:

Կասի. - Թակավոր զիզնիյ իշու խավի ծյու կուզի:

Իրկան կասի. - Կընա՛ էլմ էն տեղ, իշու խավի ծյու ուզի:

Կընաց էն տեղեն չափյուկմ իլին իշու խավի ծյու, առեց էկավ:

Իպե ճամբախ, ասեց. «Կայնի խեմ, աղորթ, էսա ի՞նչ ի»:

Մեյ խատ կոտրեց, տեսավ իշու քյուտակ էլավ մեչեն, փախավ:

Մարթ տարավ չափկով իտիր թակավրու առնե:

Թակավորն ասաց խըզմաթքյարներաց. - Էկեք էսա ծըվեր կոտրըրտեք:

Խըզմաթքյարներ կոտրըրտեցին, քուտկըներ էլան տյուս, տոռնիյմ զարկին մեչ թակավրու իրիսին, փախան:

Իտորից էլ փըռթավ:

Թակավոր կմտածի, կմտածի, կասի. - Քյեզնե կուզիմ մեկ մարթ, ուր պոյ մեկ գյազ ըլնի, ուր մուրուս չորս գյազ ըլնի:

Կասի կընգյան. - Թակավոր զիզնե կուզի մարթըմ, ուր պոյ մեկ գյազ, մուրուս չորս գյազ:

Աղչիկ կասի. - Կընա ծովափ, ասա՝ ծեր աղչիկ խիվանդ ի, ուր խեր կուզի: Իմ խեր կուզյա տյուս, առ արի:

Մարթ կընայ ծովափ, ասայ. - Ծեր աղչիկ խիվանդ ի, ուր խեր կկանչի:

Ճրից տյուս էլավ մարթըմ, ուր պոյ մեկ գյազ, մուրուս՝ չորս գյազ:

Առեց էտա մարթուն տարավ մո թակավոր: Ինչ թակավոր իտոր տեսավ ասայ. - Իտա մարթ մը պիրե մո զիկ:

Էտա խարսի խերն ասայ. - Էսա՞ ի զիկ ուզող:

Ասայ. - Խա, էսա ի:

Մարթն առեց տարավ մո թակավոր:

Խարսի խեր պռնեց թակավրու մուրուսից, էօլեոխնեց չում ջահնամ: Թակավոր ուր ասքըրով հ՚ըմեն փըճըլցուց:

Սորա կընայ ուր փեսեն իպե, իտիր թախթի վերեն, արայ թակավոր:

Ինոնք խասան ուրենց մուրազին, տյուք էլ՝ ծեր: